

15.05.2015

Ք. Իջևան

Ներկա էին գիտխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակում անցկացված դասալսումների արդյունքների մասին /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/:

2. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՅԻՆ.- Կարևորելով դասալսումը որպես ուսումնական գործընթացի որակի նպատակային կատարելագործման մեխանիզմ և դասավանդման որակի բարելավման միջոց՝ զեկուցող Վ. Ալեքսանյանը հայտնեց, որ ֆակուլտետի բոլոր ամբիոններում ուսումնական տարվա սկզբին մշակվել է դասալսումների ժամանակացույց: Համաձայն պլանավորված դասալսումների ժամանակացույցի ֆակուլտետի ղեկանը և ամբիոնների վարիչները իրականացրել են դասալսումներ: Դասալսումներ կատարվել են ինչպես սկսնակ և սակավափորձ, այնպես էլ բավարար աշխատանքային փորձ ունեցող դասախոսների մոտ: Այն նպատակ է հետապնդել վեր հանել երիտասարդ դասախոսների մոտ նկատված թերությունները և սխալները, նրանց ցուցաբերել մասնագիտական և մեթոդական օգնություն, ինչպես նաև նպաստել դասախոսների մանկավարժական վարպետության աճին: Դեկանը տեղեկացրեց, որ ինքը առանձին և ամբիոնների վարիչների հետ միասին դասալսումներ է իրականացրել հետևյալ դասախոսների մոտ. ք.գ.թ. Հ.Վանյան /Հայոց լեզվի և գրականության ամբիոն, առարկա՝ Գրականագիտություն/, պ.գ.թ., դոցենտ Ա.Ղազարյան /Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն, առարկա՝ Միջին դարերի պատմություն/, պ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյան /Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն, առարկա՝ Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմություն/, պ.գ.թ., Դ. Թինոյան /Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն, առարկա՝ Նոր պատմություն/, ք.գ.թ. Հ. Մովսեսյան /Հայոց պատմության և հասարակագիտության

ամբիոն, առարկա՝ Քաղաքագիտություն/: Դասալսումներից հետո կատարվել են դասի արդյունքների քննարկումներ և վերլուծություն, որին մասնակցել են նաև ամբիոնների մյուս դասախոսները: Տրվել է դասի կազմակերպման ընդհանուր բնութագիրը, կիրառված մեթոդների նկարագրությունը: Մատնացույց են արվել նկատված թերությունները, վրիպակները: Խրախուսվել է առանձին դասախոսների դասի վարման նորարարական փորձը, առաջադեմ մեթոդները և միջոցները: Դեկանը արձանագրեց, որ դասալսումները անցել են համաձայն կանոնակարգի կետերի: Նշեց, որ բոլոր դասախոսները դասի ընթացքում ցուցաբերել են պատշաճ ակադեմիական պատրաստվածություն, մասնագիտական ու մանկավարժական որակներ: Դասալսումների արդյունքները գրանցվել են նաև դասի գնահատման հարցաթերթում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը: Նրանք կարևորեցին դասալսումը, որպես ուսման գործընթացի կատարելագործման մեխանիզմ և դասավանդման որակի բարելավման միջոց: Արժևորեցին դասի ընթացքում նոր մեթոդներ և տեխնիկական միջոցներ կիրառող դասախոսներին: Անհրաժեշտ է իրականացնել նաև փոխադարձ դասալսումներ, որը մեզանում դեռևս չի կատարվում: Փորձառու դասախոսները պետք է ծանոթ լինեն երիտասարդ դասախոսների նորարարական փորձին և իրենց դասերին կիրառեն երիտասարդների դասի վարման նոր մեթոդները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- *2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակում իրականացված դասալսումների արդյունքները գնահատել բավարար:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. Ալեքսանյան
Ա. Ղևոնդյան